

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20/3

22 մայիսի 2012թ.

Քննարկվեց Ա/Ձ Հովսեփ Հարությունյանի 14.05.2012թ-ի գանգատը «ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի» ՀՏ 02.05.2012թ. թիվ 2105735 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն «ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի» ՀՏ պետի 22.03.2012թ. թիվ 2105735 հանձնարարագրի «ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի» ՀՏ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Հովսեփ Հարությունյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը «ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի» ՀՏ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված), հսկիչ-դրամակազմի մեքենաների կիրառման ճշտության և հաստատագրված վճարների մասին օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում 02.05.2012թ-ին կազմվել է թիվ 2105735 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Հովհաննես Կուրդիյանը, հարկային տեսուչներ Լևոն Սարգսյանը և Մանուկ Հովհաննիսյանը 16.04.2012թ. ժամը 15:30-ին այցելեցին Դրոյի 15 հասցե, որտեղ գտնվում է Ա/Ձ Հովսեփ Հարությունյանին պատկանող վարսավիրանոցը: Տվյալ պահին վարսավիրանոցում քաղաքացի Արմինե Պետրոսյանին չտրամադրվեց ՀԴՄ կտրոն սպասարկելու դիմաց (մազերի հարդարում 2000 դրամ արժողությամբ): Աշխատակցի կողմից չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 15:34-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց ՀՅ հաշվետվություն՝ 4500 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: ՀՅ հաշվետվությունը դուրս բերելուց հետո ժամը 15:35-ին կատարված վճարման արժեքը՝ 2000 դրամը, մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 15:35-ին նորից դուրս բերվեց ՀՅ հաշվետվություն՝ 2000 դրամ ընդհանուր գումարով: Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները: Արդյունքում տնտեսավարող սուբյեկտին «սկիչ-դրամակազմի մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով:

Ա/Ձ Հովսեփ Հարությունյանի գանգատում մասնավորապես նշված է.

Ստուգման ակտի 2-րդ կետով արձանագրվածը չի համապատասխանում իրականությանը: Իրականում ապրիլի 16-ին ժամը 15:15-ից 15:30 ընկած միջակայքում Դրոյի 15 հասցեում գտնվող վարսավիրանոցում կատարված վարսավիրական ծառայության դիմաց քաղաքացուից ստացված 2000 դրամը վարսահարդարի կողմից մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել ՀԴՄ կտրոն, քաղաքացուին չսպասելով, որ վերցնի իրեն տրամադրվելիք ՀԴՄ կտրոնը, հապշտապ հեռացել է կտրոնը թողնելով սեղանին: Չանցած մի քանի րոպե, վարսավիրանոց են մտնում երեք անձնավորություններ, որոնք առանց ներկայանալու, հարցնում են, թե որտեղ է գտնվում Հովսեփ Հարությունյանը: Համոզվելով որ Հովսեփ Հարությունյանն այդ պահին բացակայում է, նրանցից մեկը մոտենում է ՀԴՄ-ին, ինչ որ գործողություններ կատարում, այնուհետ տեսնելով սեղանի վրա դրված 2000 դրամի ՀԴՄ կտրոնը, որը քաղաքացուին չէր վերցրել, վերցնում է և թաքցնում իր մոտ: Այնինչ, վարսահարդարն այդ բոլորը տեսնում է իր աշխատատեղում գտնվող հայելու միջից: Այնուհետ, հարկային ծառայողների կողմից բոլորովին անհիմն, ապօրինի մուտքագրվում է ՀԴՄ 2000 դրամ, քանի որ կատարված վարսավիրական ծառայության դիմաց արդեն իսկ ՀԴՄ ներառված է եղել 2000 դրամը:

Ակտում արձանագրված է, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները: Մինչդեռ գնորդին, պատվիրատուին

ապրանքի հետ դրամարկղային չեկ չեմ կարող տրամադրել այն պարզ պատճառով, որ ապրանքների վաճառք չեմ իրականացնում, այլ բացառապես զբաղվում եմ վարսավիրական ծառայության գործունեությամբ, կամ ծառայություն եմ մատուցում, այսինքն՝ հիշատակված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջն ինձ վերաբերելի չէ:

Բացի այդ, բոլոր դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտումները պետք է արձանագրվեն բացառապես հսկիչ գնման արդյունքում խախտումն արձանագրելու դեպքում: Ընդ որում, հսկիչ գնումը պետք է իրականացվի այդպիսի իրավասությամբ օժտված հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) կամ այլ անձի կողմից: Հսկիչ գնումն այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ) իրականացնելու դեպքում հանձնարարագրում նշվում են նաև այդ անձի տվյալները:

Մինչդեռ, ստուգման ակտի 2-րդ կետի համաձայն, գլխավոր հարկային տեսուչները 16.04.2012թ. ժամը 15:30-ին այցելել են Դրոյի 15 հասցեում գտնվող վարսավիրանոց և այդ պահին քաղաքացի Արմինե Պետրոսյանին սպասարկելու դիմաց չի տրամադրվել ՀԴՄ կտրոն: Այսինքն, հարկային ծառայողներն ընդամենը տեսել են (և ոչ թե կատարել են հսկիչ-գնում), որ քաղաքացի Արմինե Պետրոսյանին չի տրամադրվել ՀԴՄ կտրոն:

Միաժամանակ, ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը ևս ոչնչով չի հիմնավորվել: Այսպես, ստուգման ակտի 2-րդ կետում արձանագրված է, որ ՀԴՄ-ից ժամը 15:34-ին հանված ՀՇ հաշվետվության մեջ ներառված 4500 դրամ գումարն իր մեջ չի ներառում վարսավիրանոցում տվյալ պահին քաղաքացի Արմինե Պետրոսյանից գանձված 2000 դրամը: Թե ինչու 4500 դրամ գումարն իր մեջ չի ներառում 2000 դրամը, բացարձակ անտրամաբանական է և ոչնչով հիմնավորված չէ:

<<<ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ ստուգման ակտն ինձ պետք է ներկայացվեր կամ փոստայիս ծառայություն մուտքագրվեր մինչև սպրիլի 28-ը ներառյալ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված ստուգման ակտի նախագծի վերաբերյալ առարկությունները Նոր Նորք <Տ է ներկայացվել 25.04.2012 թ-ին, իսկ ապրիլի 28-ը լինելով շաբաթ օր, եղել է աշխատանքային օր: Սակայն, հարկային ծառայողների կողմից ստուգման ակտը կազմվել է ս.թ. մայիսի 2-ին, իսկ փոստային ծառայություն է մուտքագրվել ս.թ. մայիսի 3-ին:

Ստուգման հանձնարարագրում ընդգրկված է նաև գլխավոր հարկային տեսուչ Արամ Ազարյանը, սակայն փաստացի չմասնակցելով ստուգման գործընթացին (վերջինիս տվյալները ակտի 2-րդ կետում բացակայում են), իր կողմից ստորագրվել են ստուգման ակտի նախագիծը և ակտը, դրանով իսկ կասկածի տակ դնելով ստուգման ակտի արժանահավատությունը:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Հովսեփ Հարությունյանը խնդրում է անվավեր ճանաչել << ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի <Տ 02.05.2012թ. թիվ 2105735 ստուգման ակտը:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Հովսեփ Հարությունյանի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ իրականացված ստուգմամբ, ըստ էության, չի հիմնավորվել ստուգման ակտով արձանագրված խախտումը կատարված լինելու հանգամանքը:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Ա/Ձ Հովսեփ Հարությունյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը, ի դեմս ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Իր հերթին <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ստուգման ակտում պետք է նկարագրվեն արձանագրված խախտումները, իսկ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> << օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն, վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից մշակվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման և հսկիչ գնման ուսումնասիրության հանձնարարագրերում արտացոլման ենթակա տվյալների, ստուգման (ուսումնասիրությունն) իրականացնող պաշտոնատար անձանց կողմից իրականացվող գործողությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմվող, համապատասխանաբար՝ ստուգման ակտում և արձանագրությունում արտացոլման ենթակա տվյալների (տեղեկությունների) ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որը ՀՀ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 գրությամբ հասցեագրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին:

Ընթացակարգի 3-րդ կետի համաձայն. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ՀՊՄ ստուգման հանձնարարագրերի վավերապայմանների նկատմամբ կիրառվում են ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի դրույթները, ուստի, ի թիվս հավելվածում ներառված այլ վավերապայմանների, ստուգման հանձնարարագրում պետք է նշվեն՝

- հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը).

- հսկիչ գնումն այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ) իրականացնելու դեպքում՝ նաև այդ անձի տվյալները»:

Քննարկվող դեպքում համաձայն ստուգման ակտի 2-րդ կետի, համապատասխան ծառայությունը մատուցվել է քաղաքացի Արմինե Պետրոսյանին, որի տվյալները ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի 22.03.2012թ. թիվ 2105735 հանձնարարագրում նշված չեն:

Վերոգրյալից հետևում է, որ խախտվել են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև Ընթացակարգի 3-րդ կետի պահանջները:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ստուգման ակտի 2-րդ կետում, ըստ էության, սխալ է նշված այն իրավական նորմը, որի պահանջները չեն կատարվել: Մասնավորապես, ստուգման ակտի 2-րդ կետի համաձայն, խախտվել են ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, այն դեպքում, երբ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացի Արմինե Պետրոսյանին մատուցվել է ծառայություն, որպես խախտում պետք է նշվեր նույն կանոնների 19-րդ կետի <գ> ենթակետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Հովսեփ Հարությունյանը ժխտում է ստուգման ակտով արձանագրված խախտումն կատարված լինելու հանգամանքը, Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ստուգմամբ, ըստ էության, չի հիմնավորվել ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի պահանջները խախտվելու փաստը:

<Կարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝


ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ղ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 02.05.2012թ. թիվ 2105735 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԱՐՄԵՂՅԱՆ